



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն
30. 06. 2020 թ.

Էստոնիայի դրամաշնորհը ՔՈԱՖ-ին՝ հանուն համավարակի հաղթահարման

Էստոնիայի Հանրապետությունը «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին (**ՔՈԱՖ**) €28 հազար եվրո **դրամաշնորհ** է տրամադրում, որը ծառայելու է կորոնավիրուսային համավարակի դեմ պայքարին: Ծրագիրը կյանքի կկոչվի 2020 թ. հուլիսին:

Որպես **Եվրոպական միության** հումանիտար ծրագրի զարգացում, երբ Լոռու մարզի 26 բուժհաստատությունների տրամադրվել են վարակի տարածումը կանխող պարագաներ, **Էստոնիայի դրամաշնորհն** ուղղվելու է նույն համայնքներում **բժշկական նորագույն պարագաների ու սարքավորումների ձեռքբերմանը**:

Դրանք ներառում են 1 կենսաքիմիական անալիզատոր Լոռու մարզի համար, 2 փոքր շարժական ուլտրաձայնային սարք, BP տոնոմետր, գլյուկոմետր՝ շաքարի չափող սարք, և զարկերակային օքսիմետր, ինչպես նաև անհրաժեշտ պարագաների հավաքածու՝ ձեռնոց, ախտահանող միջոցներ, հեռավար ջերմաչափեր, պաշտպանիչ ու շնչող դիմակներ և պաշտպանիչ արտահագուստ:

«Էստոնիան մեծապես կարևորում է կորոնավարակի ճգնաժամի այս պայմաններում համերաշխության դրսևորումը և ձեռք մեկնելը աջակցության կարիք ունեցող գործընկերներին: Այս պահին Հայաստանը ջանադրաբար պայքարում է վարակը հաղթահարելու համար, ու մենք հույս ունենք, որ մեր ներդրումը Եվրամիության արագ արձագանքման մեխանիզմին՝ Լոռու մարզում բժշկական կենսական անհրաժեշտության սարքավորումների ձեռքբերման նպատակով, Հայաստանի կյանքում թեև փոքրիկ, բայց դրական փոփոխություն կբերի»,- նշում է Հայաստանում Էստոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Կաի Կաարելսոնը:

Գյուղական համայնքների բուժհաստատությունները տեղական միակ կառույցն են, ու ապահովում են բնակիչների առողջությունն ու անվտանգությունը COVID-19 տարածման կանխարգելման և կառավարման ճանապարհին:

«Ասիմպտոմ վարակակիրների թվի աճին զուգահեռ՝ նրանց բուժումը վերահսկող առողջության առաջնային պահպանման օղակի մասնագետները հայտնվում են ամենավտանգավոր գոտում: Եվ այս պարագայում գյուղական բուժկետերի, ամբուլատորիաների ու առողջության կենտրոնների ամրապնդումն ու ապահովագրումը հրատապ է դառնում և կենսական»,- ընդգծում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատուրյանը**:



CHILDREN
OF ARMENIA
FUND

Կորոնավիրուսային համաճարակի դեմ պայքարում ՔՈԱՖ-ը վստահելի գործընկերոջ համբավ է վայելում Հայաստանին ցուցաբերվող օժանդակության արդեն երրորդ ծրագրով: *Էստոնիայի Հանրապետության* այս աջակցությունից բացի, *Եվրոպական միության* ֆինանսավորմամբ ՔՈԱՖ-ը մարդասիրական բացառիկ օգնություն է ցուցաբերել Լոռու մարզի 28 համայնքի 1000 ընտանիքի և գյուղական 26 բուժհաստատությունների, իսկ *Ավստրիական զարգացման գործակալության* օժանդակությամբ Շիրակի մարզում ՔՈԱՖ-ի շահառու 7 գյուղերի բուժհաստատություններ և 180 խոցելի ընտանիք առաջին անհրաժեշտության պարենի և պարագաների աջակցություն են ստացել:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կղառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին՝ ծառայելու մարզի շուրջ 150 հազար բնակիչներին: